ՔԱՋ ՀՈՎԻՒ

Հովիւ քաջ, հովիւ բարի եւ առաքինական...

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ

Երբ սուտ հովիւներ՝ մոռացած երդումն,
Մոռացած կոչումն և պարտքն հովական,
Որոնում էին վայելք աշխարհում,
Ո՛վ անսուտ Հովիւ, դու էիր միայն
Քո անձրդ դընում հօտիդ փրկութեան,
Դու էիր նորան և տէր և պաշտպան։

Երբ արծաթասէր, անարդ հովիւներ
Կեղեքում էին հօտը սեպհական.
Երբ ծածուկ, յայտնի, իբր աւազակներ,
Աւարում էին անխընայ նորան՝
Ով անկեղծ հովիւ, տառապեալ հօտիդ
Դու տալիս էիր քո սիրտդ ու հոգիդ։

Թող չար հովիւներ աշխատեն խըլել
Հիմա քեզանից քո ցուպն հովական,
Թող նոքա ջանան որոգայթ փորել
Քո ոտների տակ, ով հալածական—
Հօտըդ ճանաչեց նոցա սև հոգին
Ճանաչեց և իւր պաշտելի հովիւին։